

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՀ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԻԳԱՅՈՒՄ

1986 թվականի օգոստոսի 24-ին և 25-ին Լատվիական ՍՍՀ մայրաքաղաք Ռիգայում տեղի ունեցան Ավետարանական-Լութերական Եկեղեցու նոր պետի՝ Էրիկ Մեստերս արքեպիսկոպոսի գահակալության հանդիսությունները:

Հանդիսություններին ներկա էին Շվեդիայի, Նորվեգիայի, Հունգարիայի, Արևելյան և Արևմտյան Գերմանիաների, Լիտվայի, Էստոնիայի և լութերական այլ եկեղեցիների, Ռուսաց, Վրաց և կաթոլիկ քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ: Ի դեմս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գահակալական հանդիսություններին իր մասնակցությունը բերեց նաև Շիրակի թեմի բարեջան առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

Հանդիսավոր սրբական պատարագն ու ձեռնադրությունը տեղի ունեցան Ռիգայի Ս. Գերտրուդ եկեղեցում, որն այդ օրը հոչակվեց Լատվիայի Ավետարանական-Լութերական Արքեպիսկոպոսության Մայր տաճար: Հավարտ ս. պատարագի Էրիկ Մեստերս արքեպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց իր գործակիցներին ու հավատացյալ ժողովրդին՝ իր նկատմամբ ցուցաբերված բարձր վստահության համար: Ապա ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկան քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի, շնորհավորանքի և բարեմաղթության խոսք ասաց նաև գերաշնորհ Նարեկ եպս. Շաքարյանը:

Օգոստոսի 25-ին նույնպես, հրաժեշտի մեծահանդես ճաշկերույթին, բեղմնավոր գործունեության բարի մաղթանքներով հանդես եկավ Շիրակի թեմի առաջնորդ սրբազան հայրը:

ԹՂԹԱԿԻՑ